սի» տալիս են իրենց հոգու բաժինը և ստանում չորս ժամ «ի տաւնի էրեւման Խաչին» (Յաւել. Ա. 60)։ Հարց է, թէ ե՞րբ էր ապրում Տէր Յոհաննէսը. «տէր» տիտղոսը ԺԴ. դարում, ինչպէս և առաջ յատուկ էր կութեամբ արձանագրութիւնների մէջ (Յաւել. Ա. 2(*), 43, 45)։ Յոհաննէսի նախորդն էր Բճնոյ աթոռի վերայ դարձեալ Գրիգոր անունով մի եպիսկոպոս, որ 1246, 1251, 1267, 1284 թ. թ. յիշատակ-

Պատկեր 131.

միայն եպիսկոպոսներին և կաթողիկոսներին. պէտք է ենթադրել, որ այս Տէր Յոհաննէսն էլ Բճնոյ եպիսկոպոս էր, որի աթոռի հետ սերտ կապուած էր եւ Կեչառիսի վանքը, ինչպէս տեսանք Գրիգորիս եպիսկոպոսի եւ Գրիգոր վարդապետի անունների յիշատակարանների մէջ (**). Յովհաննէսը նորա տեղն ան-

(*) Այս Յաւել. ա. Խաղբ. պատկ. 4։

(**) Մեր յօդուածը՝ Զագավանից ժողովը, Շողակաթ, 1913, վաղարշ., եր. 29 և շար.։